

2011/215/ԵՄ

**Միություն կամ երրորդ երկրներ ներմուծելու համար նախատեսված  
ապրանքների՝ բեռները ներկայացնելու սահմանային հսկողության  
անցակետում փոխաբեռնման առումով Խորհրդի 97/78/ԵՀ հրահանգը  
կիրարկող՝ Հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 4-ի կիրարկող որոշում**  
(ծանուցված՝ թիվ C(2011) 2067 փաստաթղթի համաձայն)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

*Պաշտոնական տեղեկագիր, L 090, 06.04.2011թ., էջ 0050- 0052*

(2011/215/ԵՄ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,  
հաշվի առնելով երրորդ երկրներից Համայնք ներմուծվող ապրանքների  
անասնաբուժական ստուգումների կազմակերպման սկզբունքները սահմանող՝  
Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 18-ի 97/78/ԵՀ հրահանգը՝ եւ,  
մասնավորապես, դրա 9(2) եւ 11(4) հոդվածները,

Քանի որ

1) 97/78/ԵՀ հրահանգով ապահովվում է, որ երրորդ երկրներից Միություն  
ներմուծվող կենդանական ծագմամբ ապրանքների եւ որոշ բուսական  
ապրանքների անասնաբուժական ստուգումներն իրականացվեն անդամ  
պետությունների կողմից՝ համաձայն այդ Հրահանգի: Դրանով նաեւ  
նախատեսվում է, որ անդամ պետություններն ապահովեն, որ նման ապրանքներ  
պարունակող բեռները ներմուծվեն Միություն սահմանային հսկողության  
անցակետով,

2) 97/78/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածով նախատեսվում է, որ ներկայացման  
սահմանային հսկողության անցակետում համապատասխան ընթացակարգեր  
անցկացվեն այն դեպքում, երբ բեռները, որոնք նախատեսված են սահմանային  
հսկողության այլ անցակետով Միություն ներմուծվելու համար, փոխաբեռնվում են

---

<sup>1</sup> ՊՏ L 24, 30.01.1998թ., էջ 9:

ներկայացման հսկողության այն անցակետում, որը գտնվում է Միության միեւնույն նավահանգստի կամ օդանավակայանի մաքսային տարածքում,

3) 97/78/ԵՀ հրահանգի 11-րդ հոդվածը վերաբերում է երրորդ երկրից ներմուծվող բեռներին, որոնք փոխաբեռնվում են Միության միեւնույն նավահանգստի կամ օդանավակայանի մաքսային տարածքում գտնվող ժամանման սահմանային հսկողության անցակետում, սակայն նախատեսված են այլ երրորդ երկիր ներմուծվելու համար Միության տարածքի մեկ այլ սահմանային հսկողության անցակետով կամ անմիջապես երրորդ երկիր ներմուծվելու համար առանց մեկ այլ սահմանային հսկողության անցակետում ներկայացվելու,

4) բացի դրանից՝ 97/78/ԵՀ հրահանգի 9-րդ եւ 11-րդ հոդվածներով նախատեսվում են մի շարք շեղումներ ներկայացման սահմանային հսկողության անցակետում կատարվող անասնաբուժական ստուգումների մասին ընդհանուր կանոններից: Այդ շեղումներն ունեն գործողության այլ շրջանակ եւ կապված են խմբաքանակների վերջնական նշանակետի ու ժամանման սահմանային հսկողության անցակետում փոխաբեռնելու ժամանակ բեռների պահեստավորման տեսողության հետ,

5) այդ տեսողությունը որոշվում է՝ ելնելով նման պահեստավորման համար նախատեսված նվազագույն եւ առավելագույն ժամկետներից, որոնք որոշվում են 97/78/ԵՀ հրահանգում նշված ընթացակարգի համաձայն,

6) բեռների՝ Եվրոպական համայնք վերջնական ներմուծման համար նախատեսված սահմանային հսկողության անցակետում ապրանքների փոխաբեռնման մասին եւ Հանձնաժողովի 93/14/ԵՏՀ որոշումը փոփոխող՝ Խորհրդի 97/78/ԵՀ հրահանգի<sup>2</sup> 9-րդ հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2000/25/ԵՀ որոշմամբ սահմանվում են այն նվազագույն եւ առավելագույն ժամկետները, որոնք կիրառվում են այն դեպքերում, երբ բեռները ենթակա են միեւնույն տարածաշրջանում գտնվող կամ այլ անդամ պետության տարածքում գտնվող մեկ ուրիշ սահմանային հսկողության անցակետով Միություն ներմուծվելու համար,

---

<sup>2</sup> ՊՏ L 9, 13.01.2000թ., էջ 27:

7) 2000/25/ԵՀ որոշումն ամբողջությամբ պարզ չէ այն խմբաքանակների վերաբերյալ կանոնների գործողության շրջանակի առումով, որոնք փոխաբեռնվում են մեկ օդանավից մյուսը կամ մեկ նավից մյուսը միեւնույն նավահանգստի կամ օդանավակայանի մաքսային տարածքում՝ առանց Միության տարածքում հետագայում կանգ առնելու կամ Միության տարածքով անցկացվելու նպատակով: Հետեւաբար, անհրաժեշտ է սույն Որոշմամբ սահմանել կանոններ՝ հստակեցնելու համար այն դրույթները, որոնք արդեն սահմանված են 2000/25/ԵՀ որոշման մեջ, այդ թվում՝ համապատասխան նվազագույն ժամկետների մասին կանոններ,

8) հանրության եւ կենդանիների առողջությունը պահպանելու նպատակով, ներկայացման սահմանային հսկողության անցակետում պաշտոնատար անասնաբույժին պետք է տրամադրվի համապատասխան տեղեկություններ այն դեպքում, երբ տվյալ բեռների վրա տարածվում է 97/78/ԵՀ հրահանգի 9-րդ եւ 11-րդ հոդվածների դրույթները: Հետեւաբար, անհրաժեշտ է սահմանել բեռը սահմանային հսկողության անցակետ հասնելու ժամանակ բեռնման համար պատասխանատու անձի կողմից տեղեկությունների տրամադրման կանոններ,

9) այն նվազագույն ժամկետը, որի լրանալուն պես անասնաբուժական ստուգումների պետք է ենթարկվեն այն բեռները, որոնք փոխաբեռնվում են մեկ նավից մյուսը միեւնույն նավահանգստում եւ որոնք, 97/78/ԵՀ հրահանգի 9-րդ եւ 11-րդ հոդվածների համաձայն, նախատեսված են երրորդ երկրներ տեղափոխվելու համար, կազմում է 7 օր,

10) այն բեռների դեպքում, որոնք փոխաբեռնվում են մեկ նավից մյուսը, միեւնույն նավահանգստում ժամանման սահմանային հսկողության անցակետում եւ որոնք նախատեսված են անմիջապես երրորդ երկիր տեղափոխվելու համար առանց Միության տարածքում կանգ առնելու, կենդանիների եւ հանրության առողջության համար վտանգները Համայնքում նվազում են, քանի որ խմբաքանակների շփումը Միության տարածքի հետ սահմանափակվում է: Նման դեպքերում, անհրաժեշտ է երկարաձգել 97/78/ԵՀ հրահանգի 9-րդ եւ 11-րդ հոդվածներում նշված նվազագույն ժամկետը,

11) այդ երկարաձգելը պետք է կատարվի ժամանման սահմանային հսկողության անցակետի անդամ պետության կողմից համապատասխան երաշխիքների տրամադրմամբ: Մասնավորապես, անդամ պետությունն ապահովում է նման

բեռների տեղաշարժը Միության այլ նավահանգիստ կանխարգելելը, եւ դրանց ուղարկվելը անմիջապես երրորդ երկիր: Բացի դրանից՝ այդ անդամ պետությունը պետք է Հանձնաժողովին եւ այլ երրորդ երկրների տրամադրի համապատասխան տեղեկություններ այդ երաշխիքների վերաբերյալ, այդ թվում՝ տեղեկություն դիտանցման համակարգի վերաբերյալ՝ բեռի ծանուցման մեջ նշված ժամկետների պահպանումը եւ կոնկրետ նշանակետ հանդիսացող հետագա բեռնափոխադրման առումով պայմանավորվածություններն ապահովելու համար,

12) բացի դրանից՝ կարելի է նշել, որ բեռները պետք է ներկայացվեն 97/78/ԵՀ հրահանգում սահմանված բոլոր անասնաբուժական ստուգումների այդ որոշման մեջ սահմանված առավելագույն ժամկետը լրանալուց հետո,

13) Միության օրենսդրության հստակության եւ համապատասխանության նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է չեղյալ համարել 2000/25/ԵՀ որոշումը եւ այն փոխարինել սույն Որոշմամբ,

14) սույն Որոշմամբ նախատեսված միջոցառումները համապատասխանում են Մենդի շրթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

### **Հոդված 1**

Երբ բեռները ներկայացվում են սահմանային հսկողության անցակետ հետագա փոխաբեռնման նպատակով, բեռի համար պատասխանատու անձը փոխանցում է տվյալ սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչին հետեւյալ տեղեկությունները՝

ա) բեռի բեռնաթափման մոտավոր տեւողությունը,

բ) Միությունում նշանակետի սահմանային հսկողության անցակետի մասին տեղեկություններ՝ Միություն ներմուծելու կամ դրա տարածքով տարանցիկ փոխադրման դեպքում կամ նշանակետ հանդիսացող երրորդ երկրի մասին՝ անմիջապես երրորդ երկիր փոխադրելու դեպքում,

գ) բեռի գտնվելու ճշգրիտ վայրը, եթե այն չի բեռնվել անմիջապես օդանավի կամ նավի վրա հաջորդ նշանակետ փոխադրվելու նպատակով,

դ) հաջորդ նշանակետ փոխադրվելու համար օդանավի կամ նավի վրա բեռի բեռնման մոտավոր տեղությունը:

Այդ ծանուցումը պատրաստվում է բեռի՝ սահմանային հսկողության անցակետ ժամանման պահին եւ իրավասու մարմնի կողմից հաստատված միջոցներով:

## **Հոդված 2**

1. 97/78/ԵՀ հրահանգի 9(1)(բ)(i) հոդվածով նախատեսված նվազագույն ժամկետը կազմում է՝

ա) օդանավակայանի դեպքում՝ 12 ժամ,

բ) նավահանգստի դեպքում՝ յոթ օր:

2. 97/78/ԵՀ հրահանգի 9(1)(բ)(i) հոդվածով նախատեսված առավելագույն ժամկետը կազմում է՝

ա) օդանավակայանի դեպքում՝ 48 ժամ,

բ) նավահանգստի դեպքում՝ 20 օր,

## **Հոդված 3**

1. 97/78/ԵՀ հրահանգի 11-րդ հոդվածի կիրառման նպատակներով՝ նույն հրահանգի 9(1)(ա) հոդվածով նախատեսված նվազագույն ժամկետը կազմում է՝

ա) օդանավակայանի դեպքում՝ 12 ժամ,

բ) նավահանգստի դեպքում՝ յոթ օր:

2. 97/78/ԵՀ հրահանգի 11(1) հոդվածի եւ նույն հրահանգի 11(2)(բ) հոդվածի երկրորդ պարբերության կիրառման նպատակներով՝ անդամ պետությունները կարող են երկարաձգել սույն հոդվածի 1(բ) պարբերությունում սահմանված նվազագույն ժամկետը՝ դարձնելով այն 14 օր՝ պայմանով, որ՝

ա) բեռները բերվում են երրորդ երկրից եւ նախատեսված են մեկ այլ երրորդ երկրի համար առանց 97/78/ԵՀ հրահանգի I հավելվածում թվարկված տարածքներում կանգ առնելու,

բ) բեռները փոխաբեռնվում են մեկ նավից մյուսը սահմանային հսկողության անցակետում Միության միեւնոյն նավահանգստի մաքսային տարածքում,

գ) համապատասխան անդամ պետությունը Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի շրջանակներում ներկայացնում է մանրամասն հիմնավորումներ, որոնց մեջ նշվում է, որ նրանք ձեռնարկել են բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ կանխարգելելու համար նման խմբաքանակներն անմիջապես երրորդ երկիր փոխաբեռնելու փոխարեն Միության այլ նավահանգիստ փոխադրելը:

Այդ միջոցներով ենթադրվում է նաեւ դիտանցման համակարգի առկայություն՝ ապահովելու համար, որ պահպանվում են 1 հոդվածով նախատեսված ծանուցման մեջ նշված ժամկետները եւ ապահովվում է բեռնափոխադրումը հետագա նշանակետ:

#### **Հոդված 4**

Այն դեպքում, երբ 2(2) հոդվածում սահմանված առավելագույն ժամկետը լրացել է, բեռը ներկայացվում է սահմանային հսկողության անցակետ՝ նույնականության եւ փաստացի վիճակի ստուգումների համար, ինչպես նախատեսված է 97/78/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածով:

#### **Հոդված 5**

Թիվ 2000/25/ԵՀ որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

#### **Հոդված 6**

Սույն Որոշումը կիրառվում է 2011 թվականի մայիսի 1-ից:

## Հոդված 7

Սույն Որոշումը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2011 թվականի ապրիլի 4-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Ջոն Դալի

Հանձնաժողովի անդամ